



«ՄՈՒՍԱ, ԼԵՌԱՆ ԶԱՌԱՍՈՒՆ ՕՐԵՐԸ» ՎԵՊԸ ՌՈՒՍԵՐԵՆ

20-րդ դարի ավստրիացի գրողների մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Ֆրանց Վերֆելը:

Նա ծնվել է 1890 թվականին Պրագայում, ֆաբրիկատիրոջ ընտանիքում: Սկսած սովորելուց իր ծննդավայրում, ապա շարունակում ու կատարելագործում է իր ուսումը Պրագայի, Լայպցիգի և Համբուրգի համալսարաններում՝ ձեռք բերելով բազմակողմանի գիտելիքներ:

Ֆրանց Վերֆելը գրական ասպարեզ է իջնում երիտասարդ հասակում, առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին: Նրա սկսված գործերը մեծ մասամբ չափածո ստեղծագործություններ են: Ֆրանց Վերֆելի բանաստեղծությունների առաջին ժողովածուն լույս է տեսնում 1911 թվականին «Տիեզերքի բարեկամը» խորագրով: Այնուհետև նա հաջորդաբար հրատարակում է «Մենք կանք» (1912 թ.), «Ընկերն ընկերոջ համար» (1915 թ.), «Դատաստանի օրը» (1919 թ.) բանաստեղծական հատորները, որոնցով նրա անունը հայտնի է դառնում գրական լայն շրջանակներում: Այդ տարիներին նա հարում է էքսպրեսիոնիստական շարժմանը, որին հետևող գրողների ստեղծագործություններին բնորոշ էին դժգոհությունն ու հիասթափությունը ներկա իրականությունից: Այդ նույն տարիներին նա մի խումբ գաղափարակից ընկերների հետ հիմնում է հակապատերազմական գաղտնի մի ընկերություն:

1920 թվականից սկսած Ֆրանց Վերֆելն անցնում է արձակ ստեղծագործությունների: Գրում և լույս է ընծայում մի շարք դրամատիկական երկեր: Դրանցից հայտնի են՝ «Սուրբ Պողոսը հրեաների մեջ», «Հավերժական ճանապարհը», «Աստուծո արքայու-

թյունը Բոհեմիայում», որոնց մեջ գլխավորապես արտացոլված է մարդու պայքարը ոգին սպանող օրենքների դեմ: Վերֆելի պիեսները բեմադրվել են Բեռլինում և Գերմանիայի ու Ավստրիայի բազմաթիվ քաղաքներում՝ արժանանալով ջերմ ընդունելության:

1929 թվականին Ֆրանց Վերֆելը ճանապարհորդում է Մերձավոր Արևելքի մի շարք երկրներում, այդ թվում նաև՝ Սիրիայում, որտեղ նա հղանում է «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը գրելու միտքը: Վեպի գրության հիմնական շարժառիթը, ինչպես նշում է հեղինակը, հանդիսացել են այն որբացած հայ երեխաները, որոնց նա հանդիպել է Սիրիայի գորգագործական մի ֆաբրիկայում և որոնց թախծոտ աչքերի մեջ կարդացել է այն վապերի ոճիրների և ահավոր սպանությունների սարսափը, որ պաշտել էր նրանց մանկական հոգին: Ահա թե ինչ է գրում նա այդ մասին. «Դամասկոսի գորգագործարանում աշխատող գաղթական խեղանդամ և սովալլուկ մանուկների անմխիթար վիճակը վճռական խթան հանդիսացավ՝ ամբողջ իրադարձության մեռյալ թագավորությունից դուրս բերելու հայ ժողովրդի անըմբռնելի ճակատագիրը»:

Այս բարձրարժեք պատմական վեպը գրելու համար Ֆրանց Վերֆելը երկար ժամանակ աշխատել է Վիեննայի Մխիթարյան հայրերի գրադարանում՝ կարդալով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին վերաբերող բազմաթիվ գրքեր և ուսումնասիրելով հայկական ջարդերի մասին հրատարակված ու անտիպ հսկայական քանակությամբ փաստաթղթեր: «Այս վեպը գրելու համար ես ութ ամիս, զիջեր-ցերեկ, մխիթարյանների մոտ կարդացի հարյուրավոր հատորներ: Մեկ անգամ վերամշակեցի ու խմբագրեցի

վեպը և երեք անգամ արտագրեցի այն», գրում է հեղինակը:

«Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի գերմաներեն բնագիրը լույս է տեսնում 1933 թվականին և միանգամից իր վրա բևեռում ընթերցող լայն հասարակության հետաքրքրությունը՝ հեղինակին բերելով համաշխարհային հռչակ: Միայն երկու տարվա ընթացքում՝ 1934—1935 թվականներին, վեպը թարգմանվել է 36 լեզուներով: 30 տարվա ընթացքում աշխարհի տարբեր երկրներում այն լույս է տեսել մեկ միլիոնից ավելի տպաքանակով:

Ֆրանց Վերֆելի գրչին են պատկանում նաև այլ վեպեր, որոնք հրատարակվել են 1930—1940-ական թվականներին: Դրանցից հայտնի են՝ «Նեապոլի երեխաները», «Վերդի», «Բարբարան կամ բարեպաշտությունը», «Ոչ թե մարդասպանը, այլ զոհն է մեղավոր», «Բեռնադետի երգը» և այլն: 1946 թվականին, հետմահու, լուս է տեսնում նրա մեկ այլ վեպը՝ «Աստղը նրանց, ովքեր չեն ծնվել» վերնագրով: Վերֆելի բոլոր գործերը հաճեցած են մարդասիրական խոր պագցումով, սոցիոլոգիական ապատասխանական ու խաղաղասիրական գաղափարներով և դրսևորում են քրիստոնեական գաղափարախոսությամբ տարված գրողի կրոնական հակումները: Իր բազմազան ստեղծագործությունների մեջ նա արտահայտել է քրիստոնեական առաքինություններով ներթափանցված ապագա մի նոր մարդկության մասին իր երազանքը: Նա հումանիստ էր այս բանի խորագույն իմաստով՝ սոցիոլոգիական բուռն սիրով դեպի հալածված և տառապած ժողովուրդներն ու մարդիկ: Այս տեսակետից նրա ստեղծագործությունների մեջ, հիրավի, առանձնակի տեղ և նշանակություն ունի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպը: Այս վեպը յուրօրինակ մի դյուցազներգություն է, որի մեջ հեղինակը ոչ թե կարեկցանք կամ խղճահարություն, այլ հիացմունք և հպարտություն է արտահայտում մուսալեռցիների՝ հայ ժողովրդի այդ մի բուռ պավակների անօրինակ հերոսության առջև: Այս վեպում, ինչպես առհասարակ իր գրեթե բոլոր ստեղծագործությունների մեջ, նա բռնության, պատերազմի, հալածանքների ու կոտորածների

դեմ հանում է մարդկայության, ժողովուրդների համերաշխության և եղբայրության պայծառ գաղափարը:

Ֆրանց Վերֆելը վախճանվել է 1945 թվականի օգոստոսի 26-ին Կալիֆոռնիայի Նահանգի Բևեռլի Հիլս քաղաքում: Իր մահից առաջ նրան բախտ վիճակվեց տեսնելու համաշխարհային մեծ չարիքի՝ ֆաշիզմի ջախջախումը: Իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում նրան մշտապես ուղեկցել է ճշմարտության համառ և անհանգիստ որոնումը:

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի հայերեն թարգմանությունը Երևանում լույս է տեսել 1964 թվականին Հայպետհրատի կողմից:

Վերջերս Հայաստանի «Սովետական գրող» հրատարակչությունը լույս ընծայեց նույն վեպի ռուսերեն առաջին թարգմանությունը, 50000 օրինակ տպաքանակով: Թարգմանությունը գերմաներեն բնագրից կատարել են թարգմանիչներ Ն. Գնեդինան և Վ. Ռուպանովը: Գիրքն ունի Ֆրանց Վերֆելի կյանքին, գրական-գեղարվեստական ստեղծագործություններին, ինչպես նաև «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի գրության տարբեր հանգամանքներին առընչվող պատմական ընդարձակ և արժեքավոր ծանոթագրություններ:

Ուշագրավ է հատկապես գրքի առաջաբանը, որ ռուսերեն թարգմանության առթիվ գրել է Սովետական Միությունում լայն ժողովրդականություն վայելող ժամանակակից գրող Միխայիլ Դուդինը: Նա հայտնի է նաև սովետահայ ընթերցողներին որպես տաղանդավոր թարգմանիչ: 1975 թվականին նա արժանացել է Հայկական ՍՍՀ մշակույթի վաստակավոր գործչի կոչման՝ հայ գրականության տարածման ուղղությամբ կատարած իր բազմամյա աշխատանքի համար:

Ստորև հաճույքով մեր ընթերցողներին ենք ներկայացնում Մ. Դուդինի վերոհիշյալ առաջաբանը, որտեղ խոր վերլուծությամբ և լայն ընդհանրացումով տրված է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրերը» վեպի գաղափարական և գեղարվեստական բնութագիրը:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ